

Հաստատված է՝

«Գյումրու Մ. Նալբանդյանի անվան

պետական մանկավարժական ինստիտուտ»

ՊՈԱԿ-ի գիտական խորհրդի

« 26 » մայիսի 2012թ. նիստում

Խորհրդի նախագահ՝ _____ Վ. Գրիգորյան

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

«ԳՅՈՒՄՐՈՒ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1. ԳՊՄԻ-ի ֆակուլտետի մեթոդական խորհուրդը ուսումնամեթոդական (գիտամեթոդական) հարցերը քննարկող խորհրդակցական մարմին է, որը կոչված է նպաստելու ֆակուլտետում տարվող ուսումնամեթոդական ու գիտամեթոդական աշխատանքների կատարելագործմանը, ուսումնակա գործընթացի պլանավորմանը, արդյունավետության բարձրացմանը:
- 1.2. ԳՊՄԻ-ի ֆակուլտետային մեթոդական խորհուրդն իր աշխատանքներում առաջնորդվում է ՀՀ գործող օրենսդրության, ՀՀ կառավարության որոշումների, կրթության ոլորտի նորմատիվային կարգավորող փաստաթղթերի, ԳՊՄԻ-ի կանոնադրության, ռեկտորի հրամանների, կարգադրությունների, վերադաս մարմնի որոշումների ու սույն կանոնադրության հիման վրա:
- 1.3. ԳՊՄԻ-ի ֆակուլտետի մեթոդական խորհրդի կանոնակարգը, նրանում կատարվող փոփոխություններն ու լրացումները հաստատվում են ԳՊՄԻ-ի գիտական խորհուրդում:

2. ԳՊՄԻ-Ի ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԿԱԶՄԸ

- 2.1. Մեթոդական խորհուրդը ձևավորվում է համամասնական սկզբունքով՝ յուրաքանչյուր ամբիոնից մեկական անդամ, որոնք առաջադրվում ու ընտրվում են ֆակուլտետի խորհրդում:

- 2.2. Մեթոդական խորհրդի նախագահին բաց քվեարկությամբ ընտրում է ֆակուլտետի խորհուրդը:
- 2.3. Ֆակուլտետի մեթոդական խորհրդի նախագահը համակարգում և ուղղորդում է խորհրդի աշխատանքները:
- 2.4. Անհրաժեշտության դեպքում մեթոդական խորհրդի կազմը կարող է փոփոխվել ռոտացիայի սկզբունքով:

3. ԳՊՄԻ-Ի ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- 3.1. Ֆակուլտետում իրականացվող ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի, ուսումնական պրակտիկաների անցկացման կարգի քննարկում ու երաշխավորում:
- 3.2. Նոր և հեռանկարային մասնագիտությունների ու մասնագիտացումների և նրանց համապատասխան կրթական ծրագրերի առաջարկում:
- 3.3. Դասագրքերի, ուսումնական և ուսումնամեթոդական ձեռնարկների քննարկում, դրանց ներքին գրախոսության կազմակերպում և տպագրության երաշխավորում:
- 3.4. Առկա և հեռակա ուսուցման համակարգերի ուսումնական, արտադրական, գիտամանկավարժական, գիտահետազոտական պրակտիկաների արդյունավետության բարձրացմանը միտված մեթոդական ապահովում և վերահսկում:
- 3.5. Ֆակուլտետում ուսումնական գործընթացի վերաբերյալ հարցումների նախապատրաստում, կազմակերպում, արդյունքների վերլուծություն:
- 3.6. Դասավանդվող առարկաների բովանդակության պետական կրթական չափորոշիչներին և գիտական արդի պահանջներին համապատասխանեցման ապահովում:
- 3.7. Ֆակուլտետի ամբիոնների էլեկտրոնային դասախոսությունների բազայի ստեղծման և համալրման գործընթացի համակարգում:
- 3.8. Դասավանդվող առարկաների յուրացման նոր, արդիական մեթոդների առաջարկում ու իրականացման կազմակերպում:
- 3.9. Լաբորատոր և գործնական աշխատանքների, տեսական դասընթացների բովանդակային համապատասխանեցման ապահովում:
- 3.10. Ընթացիկ, պետական, ասպիրանտական քննություններին այլ ստուգման ձևերի հարցաշարերի քննարկում ու երաշխավորում:
- 3.11. Արտերկրից տեղափոխված ուսանողների համար մեթոդական ծրագրերի մշակում:
- 3.12. Կրթական համակարգի բարեփոխումների վերաբերյալ ուսանողների ու դասախոսների հետ խորհրդակցությունների, սեմինարների կազմակերպում:
- 3.13. Մասնակցություն ուսումնական գործընթացին վերաբերող ներֆակուլտետային ընթացակարգերի և կանոնակարգերի ստեղծմանը:

4. ԳՊՄԻ-Ի ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ

- 4.1. ԳՊՄԻ-ի ֆակուլտետի մեթոդական խորհուրդը նիստերն անցկացնում է տարեկան առնվազն երկու անգամ, սակայն ոչ ուշ քան կիսամյակին նախորդող հինգ օրերի ընթացքում:
- 4.2. ԳՊՄԻ-ի ֆակուլտետի մեթոդական խորհրդի նախագահը գումարում և անցկացնում է խորհրդի նիստերը, ղեկավարում է խորհրդի ընթացիկ աշխատանքը, ներկայացնում է այն ֆակուլտետի խորհրդում և այլ օղակներում, ստորագրում է մեթոդական խորհրդի ընդունած փաստաթղթերը:
- 4.3. ԳՊՄԻ-ի ֆակուլտետի մեթոդական խորհուրդը քննարկում է իր խնդիրներից բխող հարցեր ղեկանի կամ ֆակուլտետի խորհրդի որոշմամբ:
- 4.4. ԳՊՄԻ-ի ֆակուլտետի մեթոդական խորհրդի նիստերն իրավագոր են խորհրդի անդամների կեսից ավելի ներկայության դեպքում:
- 4.5. ԳՊՄԻ-ի ֆակուլտետի մեթոդական խորհուրդի նիստում ընդունած որոշումներն ու առաջարկությունները ներկայացվում են ղեկանին կամ ֆակուլտետի խորհրդին:
- 4.6. ԳՊՄԻ-ի ֆակուլտետի մեթոդական խորհրդի նիստերն արձանագրում է խորհրդի անդամներից մեկը՝ նախագահի հանձնարարությամբ:
- 4.7. ԳՊՄԻ-ի ֆակուլտետի մեթոդական խորհուրդն իրավունք ունի ֆակուլտետի կառավարման մարմիններից, կառուցվածքային ստորաբաժանումներից և պաշտոնատար անձանցից ստանալ իր խնդիրների և լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթեր և նյութեր:
- 4.8. ԳՊՄԻ-ի ֆակուլտետի մեթոդական խորհրդի որոշումները, փաստաթղթերը և եզրակացությունները հաստատում են ներկա գտնվող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում վճռորոշ է խորհրդի նախագահի ձայնը:
- 4.9. ԳՊՄԻ-ի ֆակուլտետի մեթոդական խորհրդի անդամների հատուկ կարծիքը արձանագրվում է: